

ԲԱՑԱՌԻԿ ՀՈՐԻՆՎԱԾՔՈՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի տարածքում՝ Խաչեն գետի ձախ կողմով ձգվող լեռնաշղթայի ջրբաժան գագաթներից մեկի վրա է գտնվում հայ ճարտարապետության խիստ հետաքրքրական և առայժմ եզակի հուշարձաններից մեկը՝ Անապատ կոչվող վանքային համալիրը: Հուշարձանախումբը գտնվում է Կիչան գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևելք (այժմ՝ ԼՂԻՄ, Մարտակերտի շրջան): Այդտեղ իրար կից պահպանվել են երկու եկեղեցիներ, որոնցից հյուսիսայինն ունի գավիթ, իսկ քիչ հարավ սեղանատունն է, որից արևելք երևում են թվով հինգ, իրար կից սենյակների հիմնապատերը՝ 1-ից 3 մետրը բարձրությամբ: Մի ուղղանկյուն հատակագծով թաղածածկ շենքի ավերակ էլ կա սեղանատան շենքից արևմուտք: Դեռևս անցյալ դարի վերջերին այդ կառուցվածքների մեծ մասը կանգուն է տեսել Մակար եպիս. Բարխուտարյանցը[1] և իրավամբ վերագրել է դրանք միաբանական խցերի: Համալիրի շրջապատում ընդարձակ գերեզմանոցն է, ուր կան բազմաթիվ տապանաքարեր, այդ թվում նաև արձանագրություններ: Պահպանված խաչքարերը տեղադրված են շինությունների պատերի մեջ, որոնցից հինն ունի 1191 թվականով 6 տողանոց արձանագրություն: Բացի Մակար եպիս. Բարխուտարյանցից, տեղում 1960—1964 թվականներին եղել են արձանագրագիտական հատուկ գիտարշավի մասնագետները, և դրա շնորհիվ առաջին անգամ Անապատ հուշարձանախմբից արտագրվել ու հրապարակվել են երեք արձանագրություններ[2]: Սակայն ճարտարապետական այս հետաքրքիր հուշարձանախմբի առավել խոր ուսումնասիրությունը տրվում է ստորև: Ավելորդ չենք համարում նշել նաև, որ համալիրի տարածքից հավաքել ենք ևս յոթ արձանագրություն, որոնցից կարևորները ներկայացնում ենք բնագրերի հետ մեկտեղ: Այսպես, գլխավոր կամ հին եկեղեցին ունի արտասովոր ու հետաքրքիր հորինվածք. այն արտաքինից խաչաձև է[3], իսկ ներսում պարզապես միանավ բազիլիկ եկեղեցի է, որի հյուսիսային և հարավային կողմերից բացված դռները տանում են դեպի ոչ մեծ ավանդատները, որոնցից յուրաքանչյուրն ունի մեկական լուսամուտ՝ ուղղված դեպի արևելք: Սակայն կարևոր է նշել այն հանգամանքը, որ այս ավանդատները հետագայի կցորդումներ չեն, ինչպես ցույց տվեցին տեղում կատարված մանրակնին ուսումնասիրությունները: Ավանդատներն արևելքից ունեն խորաններ, որոնց չափերն ավելի մեծ են, քան բուն ավանդատան մակերեսը: Բացի այդ, խորաններն ունեն որոշ պայտաձևություն, պայտի ձև ունի նաև Ավագ խորանը, որն այստեղ, ի դեպ, խիստ շեշտված է, և որից ևս դեպի արևելք բացվում է մեկ լուսամուտ: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ և անտաշ տեղական քարերով: Հուշարձանի ներսում պատերը ամբողջապես ծեփված են եղել, ծեփը պահպանվել է մեծ մասամբ: Կարելի է հաստատապես ասել, որ որմնանկարներ չեն եղել, այլապես դրանցից մի կտոր գոնե պահպանված կլիներ այնքան լավ մնացած սվաղի վրա: Եկեղեցու ներսում, տարբեր տեղերում, պատերի մեջ բացված են շուրջ յոթ խորշեր՝ տարբեր չափերի ու խորության (տես հատակագիծը): Հավվադեպ երևույթ է այն, որ, ինչպես եկեղեցու արևելյան մասում Ավագ խորանից անցումը թաղին իրականացված է կորագծով, այնպես էլ արևմտյան ճակատում

[1] Մակար եպիս. Բարխուտարեանց, «Արցախ», էջ 167:

[2] Դիվան հայ վիմագրության, 5-րդ հատոր, էջ 90:

[3] Չափագրեցին Վալտեր Զարյանը, Արմեն Քերոբյանը, Սամվել Կարապետյանը:

իրականացված է նույն կերպ: Արևմուտքից տաճարին կից է գավիթը, որը նույնպես ունի արտասովոր հորինվածք: Գավիթը կգալի ձգվածություն ունի հյուսիս-հարավ ուղղությամբ և ունի մեկ լուսամուտ՝ հյուսիսից: Այն միաժամանակ ընդգրկում է եկեղեցու խաչթևերից արևմուտք ընկած, մոտավորապես քառակուսի մակերեսները, որոնք այս դեպքում հարմարեցված են ավանդատների: Վերջիններիցս հյուսիսայինը, որը քիչ ավելի փոքր է հարավայինից, ունի մեկ լուսամուտ՝ բացված հյուսիսից: Սակայն հարավային ավանդատունը, որը ներփակված է բոլոր կողմերից համալիրի տարբեր շինություններով, չունի և ոչ մի լուսամուտ (դրա հնարավորությունը չունենալու պատճառով): Այդպիսով գավիթը կատարում է նաև միջանցիկ սրահի դեր, մանավանդ երբ հաշվի ենք առնում գավթի երկու մուտքերի առկայությունը հարավային և հյուսիսային կողմերից: Ցավոք գավիթը վաղուց արդեն զրկվել է ծածկից, և կիսավեր երկու պատերի միջոցով միայն դրժվար է հորինվածքային որոշակի առանձնահատկության մասին որևէ ենթադրություն ա-



Անապատ հուշարձանախմբի հատակագիծը

նել: Թերևս ելնելով հատակագծային լուծումից՝ կարելի է ենթադրել, որ գավիթը եղել է թաղածածկ (նկատի ունենալով Արցախի նույն ժամանակաշրջանի նմանատիպ այլ հուշարձանները): Գավթի համարյա կենտրոնում վաղուց արդեն բարձրացել է մի հսկա թխկի՝ մոտ 80 սմ տրամագծով: Հին եկեղեցուց և գավթից հարավ, կից վերջիններիս, արևելք-արևմուտք ուղղությամբ ձգվում է երկրորդ եկեղեցին, որի կառուցման ժամանակը

Նկ 1



Նկ. 2

ստույգ հայտնի է: Այդ եկեղեցին, որը նույնպես թաղածածկ է և ունի մեկ մուտք՝ հարավից, կառուցվել է 1759 թվականին: Հավանաբար նույն ժամանակաշրջանում է վերանորոգվել հին եկեղեցին, որի պատերի մեջ ագուցված են ուշ միջնադարյան մի քանի խաչքարեր: Երկրորդ եկեղեցին ևս ունի մեկ ավանդատուն, որը գտնվում է հին և նոր եկեղեցիների միջև և հավանաբար առաջացել է այդ ոչ մեծ մակերեսի նպատակահարմար օգտագործման անհրաժեշտությունից: Եկեղեցին ունի յուրաքանչյուր կողմից բացված մեկական լուսամուտ, բացի հյուսիսային ճակատից: Այս եկեղեցին ևս կառուցված է անտաշ և կիսակոփածո քարերով: Սրբատաշ է միայն շինության կենտրոնական մասում կիսաշրջան թաղը պահող թաղակիր կամարը, որը, չհասած հատակին, ձուլվում է պատի ընդհանուր հարթության մեջ: Եկեղեցուն որպես բարավոր ծառայում է մի գեղաքանդակ խաչքար, որի ետևի երեսին փորագրված է շինարարական արձանագրությունը, իսկ ճակատային մասում 12—13-րդ դարերին բնորոշ կարդաքանդակներ են, ուր և երևում են մի քանի բառերի հատվածներ: Մնացած մեծ մասը չի երևում պատի մեջ տեղադրված լինելու պատճառով: Եկեղեցու հիմնադրման արձանագրությունը 6 տողով հետևյալն է.

Նկ. 3



Նկ. 4

ԹՎԻՆ ՌՄԼ —[1759 թ.]
ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ
ԵԿԵՂԵՑԻՍ ՄԻՆԱՍ
Ի ՈՐԴԻ ՊԱՊԱՍԻՆ ԱՂ
ՕԹԻԻՔ ՅԻՇԵՑԵՔ ԵԻ
ԱԾ ԸՀՀԵՀ ՅԻՇԷ ԱՄԵՆ

Հուշարձանախմբից 15—20 մետր դեպի հարավ սեղանատունն է, որը թաղակապ մի փոքր շենք է և տեղադրված է թեքություն ունեցող տեղանքի վրա: Սեղանատան դիրքն այնպիսին է, որ տանիքի մակարդակը հավասար է գլխավոր հուշարձանախմբի հատակի մակարդակին: Դա բացատրվում է տեղանքի խիստ թեքությամբ: Նույն դիրքն են ունեցել նաև միաբանության ավերակ շենքերը: Սեղանատան արտաքին չափերն են 760×490 սմ: Շենքի հարավային ճակատի կենտրոնից բացված է դեպի ներս լայնացող

ոչ մեծ մի լուսամուտ: Սեղանատան մուտքը արևելքից է: Ներսում, պատերի մեջ, տարբեր հատվածներում բացված են թվով 5 խորշեր: Սեղանատունը մի խորշ էլ ունի արտաքինից՝ մուտքից դեպի հյուսիս-արևմուտք ձգված ճակատում: Թաղն իրականացված է կիսաշրջանաձև և առնված է երկթեք ծածկի տակ: Սեղանատունը նույնպես կառուցված է անտաշ և կիսակոփածո կաթնագույն քարերով և ժամանակագրական առումով մոտ է երկրորդ եկեղեցուն: Գերեզմանոցը, որը, ինչպես նշեցինք, տարածվում էր հիմնականում գլխավոր հուշարձանախմբից արևմուտք, այժմ մեծ մասամբ ծածկված է թփերով ու մասամբ էլ խրված հողի մեջ: Գետնի երեսին մնացած գերեզմանաքարերից հավաքել ենք հետևյալ արձանագրությունները.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ ՊՕ
(ՂՈՍԻ ՈՐ) ԴԻ ԱՆԴՐ
(ԵԱՍ ՀԱՅՐԱ)ՊԵՏԻՆ Ռ
ՄԼԹ —1781 թ.

Մեկ ուրիշի վրա՝ երեք տող.

ԹՎԻՆ . . . . . .
ՏԱՊԱՆ ՏՐ ԻՍ(ՐԱՅԵԼԻՆ)
ԿԻՉԱՆ ԵԻ ՈՐԴ(Ի) . . . . . .

Մի բեկորի վրա՝ երկու տող.

. . . . . ԱՐ ՅԱՂԱԻԹՍ Յ
ԻՇԵՅԵՔ ԵԻ ՈՂՈՐՄԻ

Մեկ այլ բեկորի վրա՝

ԱՅՍ Է ՏԱ
ՊԱՆ . . . .

Մի խաչքարի վրա (գրչության ոճը՝ 17-րդ դար)՝

Շ[Ի]ՐՎ[Ա]ՆՅԻ
ՏՐ ՈՀԱՆ ԳՐ[Ե]ՅԻ

Մեկ այլ խաչքարի վրա՝ եղծված չորս տող.

ԱՋԱ.....ԿԱՆ
ԱՐ...ԳԵՅԻ
.....ԽԱ
.....ՉՍ

Նախկինում հրապարակված են եղել խաչքարի վրա հետևյալ վեց տողերը.

ԹԻՎ: ՈԽ —(1191) ԵՍ ՍՏԵՓԱՆՈՍ Կ
ԱՆԳՆԵՅԻ ԽԱՉՍ Բ
ԱՐԵԽԱԻՍ ՀՈԳՈՅ ԻՄՈ
ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ՈՐՔ ԿԱ
ՐԴԱՅՔ ԶԻՍ ՅԱՂԱԻԹՍ
(ՅԻՇԵՅԵՔ):

Մի տապանաքարի վրա՝ երկու տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ ԳՐԻԳՈՐԻՆ ՈՐ ԷՐ
ՄԻԱԲԱՆ ԽՕԹ
ԱՎԱՆՔԻՆ, ՍԱՅ ՈՐԴԻ ԷՐ ՍԻՄԵՕՆԻՆ:
ՌԲՃ ՄԵԿ ԹՎԻՆ (1752) թ.:

Արձանագրությունից պարզվում է, որ 12-րդ դարում, եթե ոչ ավելի վաղ, տեղում եղել է խաչքարերով գերեզմանոց: Այդ ժամանակաշրջանում է գուցե հիմնադրվել նաև հին եկեղեցին, որն ուշ միջնադարում ենթարկվել է վերանորոգման և գուցե մասամբ նույնիսկ ձևափոխման: Պարզ է նաև, որ Անապատը եղել է նշանավոր հոգևոր կենտրոն, որտեղ ապրել ու գործել են մի շարք եպիսկոպոսներ և վարդապետներ:

Անապատից մոտ 500 մետր ներքև, ձորի մեջ, կա մի աղբյուր, որը հնուց ի վեր հայտնի է **Անահիտի** կամ **Անահտի** աղբյուր անվամբ: Այժմ Անապատի բարձրադիր տեղից, խիտ անտառի պատճառով, ոչ մի տեսարան չի բացվում: Սակայն մի ժամանակ այն նույն տեղից տեսանելի են եղել հնագույն Պտկի Սուրբ Գևորգ վանքը, 5-րդ դարից հայտնի Կաչաղակաբերդը և ամբողջ Խաչեն գետի ընդարձակ հովիտը՝ իր բազմաթիվ գյուղերով ու ավաններով:

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ